

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների վերաբերյալ

Հաշվի առնելով ՀՀ տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ հանձնաժողովի աշխատակազմի հեռահաղորդակցության վարչությունը վերլուծել է հեռահաղորդակցության ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ծառայություններ մատուցող օպերատորների կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև իրենց ինտերնետային կայքերում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հրապարակվող տեղեկատվությունները:

Ներկայումս հանրապետությունում գործում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի 183 լիցենզավորված օպերատոր, այդ թվում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող 11 օպերատոր, որոնցից 4-ը ծառայություններ են մատուցում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային (աշխարհագրական) կողերով:

2020 թվականի ընթացքում լիցենզավորված 23 օպերատորներից 17-ին տրամադրվել է ցանցի լիցենզիա՝ մարզային բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար, ինչի արդյունքում հանրապետության մարզերում զարգացել են հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերը և դրանց փոխադարձ ներթափանցելիության ցուցանիշները, այդ թվում՝ նախորդ տարվա համեմատ բնակավայրերի ընդգրկվածության առումով FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերի աճը կազմել է ավելի քան 9.2%, իսկ լայնաշերտ ինտերնետ ծառայությունների լարային տեխնոլոգիաների ցանցերի աճը՝ ավելի քան 10.3%:

Ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները մատուցվում են պղնձալարային ADSL, օպտիկամանրաթելային FTTB/H, լարային Ethernet, 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար ամրակցված և այլ տեխնոլոգիաների հիման վրա:

Հանձնաժողովի որոշումների համաձայն՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսակապի արդիականացման՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի լիցենզիոն պարտավորությունների կատարման արդյունքում 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար տեխնոլոգիայի կիրառմամբ ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ ապահովված են հանրապետության 995 բնակավայրեր:

Հանրային ամրակցված կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ 513 բնակավայրերում (51.2%) հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը, որը որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 9.2%-ով:

Բացի այդ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն 190 բնակավայրում մատուցում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ՝ ADSL տեխնոլոգիայով, ինչը բնակավայրերի ընդգրկվածության առումով նախորդ տարվա համեմատ աճել է 3 բնակավայրով:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ թվային կայաններին միացված է հանրային ամրակցված հեռախոսակապի բաժանորդների շուրջ 99.91%-ը: Արդյունքում՝ Երևան քաղաքում թվայնացման մակարդակը կազմում է 100%, իսկ մարզերում՝ շուրջ 99,71% (նշված ցուցանիշը նախորդ տարի կազմում էր 95,6%):

Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1002 բնակավայր (ներառված չէ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ում բնակչություն առկա չէ, սակայն դրանցից 28-ում առկա է հանրային ամրակցված կապի ծածկույթ, իսկ հանրային ամրակցված կապի ծածկույթ չունեցող չբնակեցված մնացած 4 բնակավայրում առկա է հանրային շարժական կապի ծածկույթ:

Հաշվի առնելով նշվածը՝ կարելի է փաստել, որ ներկայումս ՀՀ բոլոր բնակավայրերը (100%) ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

Ստորև բերված է մանրամասն վերլուծություն ՀՀ բնակավայրերում (ներառյալ՝ բնակչություն չունեցող) 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային ամրակցված կապի ծածկույթների ապահովվածության վերաբերյալ.

Մասնավորապես,

ՀՀ 996 (99.4%) բնակավայրում հասանելի են հանրային ամրակցված հեռախոսակապի անլար տեխնոլոգիաների ծառայությունները և 228 (22.8%) բնակավայրում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի լարային տեխնոլոգիաների ծառայությունները:

Հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

940 բնակավայրում՝ 1 օպերատոր, 8 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 50 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր:

Բացի այդ, հանրային ամրակցված հեռախոսակապի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

Լարային տեխնոլոգիա՝ 175 բնակավայրում՝ 1 օպերատոր, 7 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 46 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր,

Անլար տեխնոլոգիա՝ 996 բնակավայրում 1 օպերատոր:

Հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների անլար տեխնոլոգիաների հասանելիությամբ ապահովված են 996 (99.4%) բնակավայր և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ՝ 570 (56.9%) բնակավայր, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 10.3%-ով (53 բնակավայր):

Հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

436 բնակավայրում՝ 1 օպերատոր, 201 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 361 բնակավայրում (հանրապետության բնակավայրերի 36%-ում)՝ 3 և ավելի օպերատոր:

Այս առումով, նախորդ տարվա համեմատ աճի դինամիկա է գրանցվել 3 և ավելի օպերատորների ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայությունների հասանելիությամբ (ամրակցված ցանցերի փոխադարձ ներթափանցելիության) ապահովված բնակավայրերի ցուցանիշներում՝ 27.1% (լրացուցիչ 77 բնակավայր):

Բացի այդ, ամրակցված լայնաշերտ ինտերնետի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

լարային տեխնոլոգիա՝ 283 բնակավայրում՝ 1 օպերատոր (որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.2 %-ով՝ 6 բնակավայրով), 166 բնակավայրում՝ 2 օպերատոր (որը նախորդ տարվա համեմատ աճել է 20.3%-ով՝ 28 բնակավայրով), իսկ 121 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր (որը նախորդ տարվա համեմատ աճել է 18.7%-ով՝ 19 բնակավայրով),

անլար տեխնոլոգիա՝ 570 բնակավայրում՝ 1 օպերատոր, 242 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 184 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր (որը նախորդ տարվա համեմատ աճել է 26.9%-ով՝ 39 բնակավայրով):

Հատկանշական է, որ նախորդ տարվա համեմատ լայնաշերտ ինտերնետ ծառայությունների լարային տեխնոլոգիաների ցանցերի աճի հետ մեկտեղ, դրական դինամիկա է գրանցվել նաև 2, ինչպես նաև 3 և ավելի օպերատորների ամրակցված լայնաշերտ ինտերնետի առանձին վերցրած՝ լարային և անլար տեխնոլոգիաների ծառայությունների հասանելիությամբ (ամրակցված ցանցերի փոխադարձ ներթափանցելիության) ապահովված բնակավայրերի ցուցանիշներում:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված ցանցի ներթափանցելիության վերաբերյալ

Մարզեր	Ամրակցված հեռախոսակապ							
	Լարային				Անլար			
	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա
Արագածոտնի մարզ	20	0	4	96	120	0	0	0
Արարատի մարզ	13	1	4	81	99	0	0	0
Արմավիրի մարզ	19	1	3	75	98	0	0	0
Գեղարքունիքի մարզ	9	0	5	83	97	0	0	0
Լոռու մարզ	16	0	5	109	130	0	0	0
Կոտայքի մարզ	9	4	5	51	69	0	0	0
Շիրակի մարզ	10	0	6	114	130	0	0	0
Սյունիքի մարզ	27	0	6	105	137	0	0	1
Վայոց ձորի մարզ	40	0	3	12	50	0	0	5
Տավուշի մարզ	12	1	4	48	65	0	0	0
ք. Երևան	0	0	1	0	1	0	0	0
Ընդամենը	175	7	46	774	996	0	0	6

Մարզեր	Լայնաշերտ ինտերնետ							
	Լարային				Անլար			
	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա
Արագածոտնի մարզ	38	15	7	60	77	33	10	0
Արարատի մարզ	33	35	20	11	16	28	55	0
Արմավիրի մարզ	37	41	15	5	26	47	25	0
Գեղարքունիքի մարզ	16	17	12	52	52	20	25	0
Լոռու մարզ	31	15	6	78	88	35	7	0
Կոտայքի մարզ	19	11	21	18	29	30	10	0
Շիրակի մարզ	28	12	23	67	57	30	43	0
Սյունիքի մարզ	29	9	7	93	132	5	0	1
Վայոց ձորի մարզ	29	2	3	21	44	6	0	5
Տավուշի մարզ	23	9	6	27	49	8	8	0
ք. Երևան	0	0	1	0	0	0	1	0
Ընդամենը	283	166	121	432	570	242	184	6

* Առանց Արծվաշեն բնակավայրի

* Հաշվարկվել է 1002 բնակավայրով ներառյալ Երևանը